ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2016 թվականի թիվ 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով, <Վարչական իրավախախտումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածով, <Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջով

ո ր ո շ ու մ եմ.

1. Համայնքի վարչական տարածքում հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ գյուղական համայնքի ղեկավար Անդրանիկ Վիրաբյանին նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել միջոցներ վարչական պատասխանատվություն առաջացրած խախտումները վերացնելու համար:
3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ վարիչ Արծրուն Նազարյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

19 հոկտեմբերի 2016թ.
ք. Իջևան